ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՀԱՆՐԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐ



ՀՀ ԼՈՒՍԱԿՈՐՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՇԱՂԻԿ-95

Հանրակրթության բարեփոխման ուղենիշներ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

Մեր պետական-հասարակական կյանքում փակ շղթա է հաստատված՝ սոցիալ-հոգեբանական ճգնաժամը խարխլում է անհատականությունը, իսկ անելանելի անորոշության մեջ հայտնված, չկողմնորոշված անձը վերարտադրում է սոցիալ-հոգեբանական ճգնաժամը: Ո՞րն է ելքն այս արատավոր փակ շրջանից:

Իր անկախ պետական տունը հաստատող հայաստանցուն այսօր պարզ է, որ այդ ելքը թելադրում է հիմնարար գաղափարների, կենսական սկզբունքների ու համամարդկային արժեքների համակարգի տեսքով ձևավորվող պետական գաղափարախոսությունը: Դա մշակվում է իշխանությունների, ազգի մտավոր ու հոգևոր սերուցքի, ժողովրդական ավանդույթի ու կրթության բարդ գործակցության միջոցով:

Անընդհատ բարեփոխվող հանրակրթությունը վարգացման խնդիր ունեցող իրականության հայտնագործությունն է, մշտապես առաջնդիմող պետության ու հասարակության անհրաժեշտ սպասարկուն: Խորհրդային ժառանգությունը՝ տասնամյա հանրակրթությունավանդներով, շուրջ 1400 դպրոց, 1100 մանկապարտեզ, 300-ի չափ արտադպրոցական հաստատություն ունեցող հանրապետական լուսավորության համակարգը, ոչ տանելի բեռ է, եթե, մեր հավաքական Ոգու դրսևորում - Անկախության հոչակագրին չենք դավաճանելու եւ, որպես մեր նորոգվող պետականության գաղափարախոսություն, մեր ապապետական գոյության ազգային-ավանդական գաղափարախոսությունը չենք պարտադրելու սերնդին՝ տարիներ շարունակ շնչահեղձ գոյատեւման ռեժիմում պահելով վեց հարյուր հազար դպրոցահասակ երեխաներին ու նրանց վաթսուն հազարանոց ուսուցչության: Գոյատեւության նման ռեժիմով հանրակրթությունն ուղղված է երեկվան, իսկ երեխաները մեր ապագան են:

Որպես մեր ձեւավորվելիք քաղաքացիական հասարակության եւ ժողովրդավարական, իրավական պետության հենարան ու գլխավոր նպատակ, ինչպիսի՞ անհատ ու քաղաքացի նկատի ունենք հանրակրթության արդյունքում: Այս հարցադրումը շիտակ պատասխան է պահանջում:

Իրենց պատմության շրջադարձային փուլերում շատ ժողովուրդներ հստակ պատասխանել են այս հարցին: Եոպատերազմական Ճապոնիայի կրթության կենտրոնական կոմիտեն «Իդեալական Ճապոնացու իմիջ» անվանումով մի փաստաթուղթ ընդունեց, ըստ որի իսկական Ճապոնացին պիտի արդի գիտելիքները յուրացնի ու այդպիսով նոր ու հզոր Ճապոնիայի հիմքերը դնի, եւ իսկական հայրենասիրությունը սերն է համայն մարդկության նկատմամբ: Բրիտանիայի կրթության գաղափարը յուրաքանչյուրի ներուժի իրագործումն է՝ հանուն ամեն մի անհատի հաջողությունների եւ ողջ հասարակության զարգացման: Ռուսաստանում այսօր հասարակությունը յուրացնում է, հանրակրթության մի մանիֆեստ, ըստ որի նոր ռուսաստան-

ցին պիտի մասնագիտորեն այնքան կայացած ու ներքուստ այնքան ապատ լինի, որ հաճույքով պահպանի ժողովրդավարական համակեցության նորմերը, որպեսզի ստանձնի պետության հաստատության պատասխանատվությունը:

1990թ. օգոստոսի 23-ի Անկախության հռչակագիրը նաեւ նոր Հայաստանի կրթական պատվերն էր իր դպրոցին: Այս պատվերը հաստատեց Հայաստանի հասարակությունը 1991թ. սեպտեմբերի 21-ի Անկախության հանրաքվեով: Սակայն հանրապետության լուսավորության համակարգն անվճռական ու անզոր գտնվեց, հապաղեց, իսկ գոյատեւման օրախնդրով կբաղված իշխանությունն ու հասարակությունն մոռացան հանրակրթական դպրոցը: Նոր իրականության, ապատկայող շփոթի ու ծանրացող կենցաղի առաջ մեն-մենակ՝ Ուսուցիչն զգաց իր ավելորդությունն ու մնաց պարապ: Այդ պարապությունը փոխանցվեց երեխային: Փոխանակ դպրոցում պահանջվող ոգու եւ մտքի աշխատանքի լույսով չեզոքացնելու կենցաղային խավարը՝ կաթվածահար հանրակրթությամբ խոցացրինք այն: Հանրապետության ճարահատ ուսուցիչների կանգվածային գործադուլը ցնցեց պետությունն ու հասարակությունն, սթափեցրեց իշխանավորին ու Ավագին՝ պարտադրելով վերջապես լրջորեն ու հեռանկարային զբաղվել մեր երեխաների հանրակրթությամբ: Բայց թողնել, խելամիտ ու հեռահար ծրագրի դիրքերից չօգտագործել այս եզակի հնարավորությունը՝ աններելի է: Հանրապետության լուսավորության բնագավառում նկատելի տեղաշարժն անհնար է՝ առանց լուսավորության համակարգի արմատական բարեփոխումն անհապաղ սկսելու:

Հայաստանում կրթության այժմեական բարեփոխման առանցքը Զարգացման, Առաջադիմության գաղափարը կարող է լինել: Առաջադիմության գաղափարը ներառում է երեք վերջնական նպատակ՝

- անհատի ապատ զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծում,

- հենց կրթական համակարգի զարգացման եւ ինքնազարգացման մեխանիզմների գործարկում,

- կրթության վերածում հասարակության զարգացման իրական գործոնի:

Այսօր սա հնարավոր է, եթե՝

1. կրթությունը մեկ իրոք հարկավոր է այնքան, որքան անունդն ու հագուստը,

2. ընդհանուր ու անդաստանի հրաժեշտ ենք տալիս ինքնամեկուսացմանն ու ինքնամեծարմանը,

3. վճռական ենք՝ խորհրդային ժամանակից ժառանգած հանրակրթական բարձր ցենզը իրական դարձնելու ու բովանդակությամբ լցնելու:

Մեկանում, պետականության կայացման այս շրջանում, դա հանրակրթության բոլոր մասնակիցների՝ ուսուցչի, ավագանի ու ծնողի, բոլոր մակարդակի իշխանավորների, հեռանկարատիրոջ ու հեռանկարատեր մտավորականի շահագրգիռ ու ակտիվ մասնակցության ապահովումն է:

Լավ դպրոցն ու լավ կրթությունը թանկ արժեն: Բարի կամեցողությամբ

առաջընթաց չենք ունենա, եթե հասարակությունն ու պետությունը հանրակրթության բարեփոխմանը նորից ծակ գրպաններով մոտենան: Անցած տարիների համեմատ՝ մոտակա տարիներին մեր երեխաների հանրակրթությունը նոր վերաբերմունք է պահանջում ու նյութական, ֆինանսական բազմապատիկ միջոցների բազմապատկում:

Հարկ է ու հնարավոր հանրակրթության արմատական բարեփոխումներն սկսել ուսուցչի սոցիալական վիճակը բարելավելուց եւ երեխայի համար դպրոցում մարդավայել պայմաններ ստեղծելուց: Մեր սեփական տունը ամեն մեկս մեր երեխայի համար մեկնիցկտրելով, բարվոք կենցաղ ստեղծելու սովոր՝ մենք կարմանալիորեն հանդուրժել ենք ոչ երեխայավայել պայմաններով հանրակրթական դպրոց ու միջավայր: Մենք պարտավոր ենք ստեղծել այնպիսի պայմաններ, որոնց դեպքում բարեխիղճ, բավարար պատրաստություն ունեցող ուսուցիչն իր հիմնական՝ մանկավարժական աշխատանքով կարողանա բավարարել իր համեստ կենցաղային, ընտանեկան պահանջները: Մենք դեմ ենք հանրակրթական դպրոցի ուսուցչին բյուջետային այլ հիմնարկների աշխատողների հետ համեմատելու վտանգավոր պրակտիկային, քանզի դա դպրոցն ուսուցիչ կորցնելու ամենակարճ ճանապարհն է: Անհնար է շրջանցել երեխաների պարտադիր ընդհանուր բարեկրթության խնդիրը: Մենք գործող, կենդանի հանրակրթական դպրոցի խնդիրներն անհոգնել կպարտադրենք իշխանության բոլոր մակարդակներին ու հասարակության բոլոր խավերին: Հետեւողականորեն կպատասխանատվություն ուսուցչին ու դպրոցը՝ շարունակ ընդլայնելով նրանց ազատ գործելու հնարավորությունները, վճարովի կրթական-մշակութային ծառայությունների ցանցը:

Կայացած քաղաքակիրթ պետություններում հանրակրթության համար վճարումը մեծապես պետական աղբյուրից է: Հայաստանի խորհրդարանն ու կառավարությունը 1995թ. պետական բյուջեում պիտի ապահովեն հանրակրթության ֆինանսավորման առաջնայնությունը: Այս գործում կգալի ներդրում կլինեն Միջազգային տարաբնույթ բանկերի կողմից տրվող վարկերից լուսավորության համակարգին հատկացվելիք միջոցները: Համաշխարհային բանկի հետ համատեղ աշխատանքներ են տարվում նոր վարկերի ստացման համար, որոնք բացառապես կուղղվեն կրթության եւ արդյունաբերության ոլորտներին, մասնավորապես դպրոցաշինության՝ վերանորոգմանը, տեխնիկական վերազինմանը, ուսումնամեթոդական բազայի հարստացմանը, կրթական ծրագրերի մշակմանը, դասագրքերի տպագրությանը, ուսուցիչների վերապատրաստմանը: Մենք ամեն ինչ կանենք, որպեսզի Սորոսի ֆոնդը Հայաստանում իր գրասենյակն ունենա: Լուսավորության նախարարությունը պիտի կարողանա հանրապետության տարածքի չափ առաջնակարգ դպրոցներ 1995թ. արժանացնել Սորոսի ֆոնդի կրթական գրանտներին: Լուսավորության նախարարությունը բաշխատեղյակ կլինի միջազգային բոլոր տիպի, պետական ու ոչ պետական, կազմակերպությունների գործունեության, որոնք կարող են ֆինանսավորել Հայաստանի հանրակրթության բարեփոխման այս կամ այն ծրագիրը:

Իրատեսությունը չկորցնենք, այս միջոցներն անբավարար կլինեն ֆինանսապես ապահովելու հանրապետության հանրակրթության բարեփո-

խումը: Մեր պետական կյանքի սահմանափակումներն այսօր պարտադրում են մեծապես օգտագործել նաեւ սոցիալապես եւ տնտեսապես ինտենսիվ մոտեցում՝ կրթության մեջ նոր մոդելների ու հարաբերությունների ձեւավորումը եւ հին հարաբերությունների ձեւափոխումը: Ներքին, ոչ բյուջետային մեխանիզմները գործի գցելն ուղղված է կրթության համակարգում ուսուցչի ու ծնողի, դպրոցի ու համայնքի հարաբերությունների փոփոխությանը, առաջացնում է մեր կրթությանն անծանոթ պայմանագրային հարաբերություններ, թույլատրում է գործի մեջ առնել մինչ այս անբավարար օգտագործված կրթական բարեփոխման գլխավոր ռեսուրսը՝ ընդունակ անհատի գործելու ազատությունը: ՀՀ ժողկրթության մասին գործող օրենքում՝ ընդունված 1974թվին, եւ՛ շեֆ, եւ՛ բազային ձեռնարկությանը, եւ՛ ընտանիքին ու հասարակական կազմակերպությանը օրենքով սահմանված ու պարտադրված է դպրոցին աջակցելը: Այդ օրենքն իրավունքի մեջ է եւ այսօր:

Հանրապետության նախագահ, կառավարություն, խորհրդարան ու հասարակություն պիտի պարտադրեն տեղական իշխանություններին, ձեռնարկատերերին, որ իրենց հիմնական պարտականությունը համարեն ու նույնիսկ եւ առաջ կրաղվեն երեխայի դպրոցի ու նրա ուսուցչի կենսական կարիքներով: Սրան ուղղված կլինեն Հայաստանի կրթության զարգացման հիմնադրամի միջոցները: Մեծ ակնկալիքներ ունենք «Հայաստան» հիմնադրամից, Հայ ընդհանուր բարեգործական միությունից, բոլոր հասարակական, քաղաքական կազմակերպություններից, մարդասիրական օգնության աղբյուրներից: Լուսավորության նախարարությունը կստանձնի այսպիսի բազմերակ ֆինանսական սնման համակարգումը, որպեսզի գումարում ստացվող միջոցները Կրթության զարգացման հիմնադրամի միջոցով ուղղի կրթական առաջնահերթ խնդիրների լուծմանը: Լուսավորության նախարարությունը շատ արագ պիտի վերածվի կրթական բարձրորակ ծրագրեր մշակող հաստատության:

Տարիներ շարունակ հարյուրավոր ընտանիքավոր ուսուցիչներ չունեն իրենց սեփական տունիքը: Բնակարանաշինությունը կանգ է առել՝ հասկանալի: Ապատվող հանրակացարաններից մեկ-երկուսը, պարապ-դատարկ մեկ-երկու շենք ու շինություն, շենքերի բազում բարեկարգ բաց ված քներ-վառոց կարող էին վերածված լինել ուսուցչական բնակարանների: Տեղական իշխանությունները հանրապետությունով մեկ պարտավոր են ամբողջությամբ փոխհատուցել ուսուցիչների տրանսպորտային ծախսերը:

Մենք վճռականորեն դատապարտում ենք ու այլեւս չենք թույլատրի լուսավորության համակարգից շենքերի, շինությունների ու գույքի օտարումը՝ ցանկացած կարեւոր, բայց ուրիշ կարիքների համար, առանց դրանց դիմաց ֆինանսական շուկայական փոխհատուցման: Այն ամենը, ինչ ժամանակին ստեղծվել է երեխաների համար, սերունդների ջանքերով, անկախ սեփականության ձեւից, մանկան հաստատության տիպից ու նրա գերատեսչական պատկանելությունից, այսօր կազմում են լուսավորության բնագավառը: Այդ բնագավառը մի խնդիր ունի՝ լիարժեք ծառայել երեխային, ձեւավորել ու բավարարել նրա կրթական պահանջմունքները:

Հանրապետությունում շուկայական տնտեսության հաստատմամբ հան-

բակրթությունը հայտնվել է կեցության միանգամայն նոր պայմաններում: Փոխանակ շուկայի՝ որպես չնչիքի ու հողմաղացի դեմ դոնկիխոտյան դատապարտված կռիվ տալու, մենք շուտափույթ կմշակենք շուկայական հարաբերություններում հանրակրթությունը ներդաշնակելու ու հարմարվելու մեխանիզմներ: Հող կնախապատրաստենք կրթական ապատ շուկայի ձեւավորման առաջին ծիլերի համար, որպեսզի հանրակրթական դպրոցը չկորցնի շուկայում ու շուկայով նորոգվելու բացառիկ հնարավորությունը: Միայն մեկ օրինակ. հանրապետության կրթության ոլորտում աշխատանքի ու ծառայությունների շուկայի արագ ձեւավորմամբ՝ գիտական ու ինժեներական ասպարեզը թողած պրոֆեսիոնալների մեծ խումբ կարող է նոր լիցք հաղորդել հանրակրթական դպրոցին: Լուսավորության համակարգի կառուցվածքային բարեփոխումները եւ համապատասխան իրավական դաշտի ստեղծումը թույլ կտան հանրապետությունով մեկ վստահ սկսելու անցումը հանրակրթության նորովի կազմակերպմանը: Գործող օրենսդրության շրջանակներում ՀՀ կառավարությունն առաջնահերթ կընդունի հանրակրթական հաստատության տիպային, տեսչական ծառայության հաստատությունների, լուսավորության նախարարության, շրջանային, քաղաքային խորհուրդների ժողկրթության բաժնի կանոնադրությունները, լուսավորության հաստատությունների անվանացանկը, լուսավորության համակարգում ուսումնագիտական աշխատանքների կազմակերպման դրույթը, հանրակրթության բնագավառում պետական պատվերի մասին նոր կարգը, ոչ պետական դպրոցների գործելու համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը: Հանրակրթական դպրոցներն ու լուսավորության բնագավառի բոլոր հաստատությունները կստանան տասնյակ տարիներ երաված ֆինանսատնտեսական ինքնուրույնություն, դպրոցական համայնքներն իրենց երեխաների դպրոցների ներքին կյանքի կազմակերպմամբ զբաղվելու, իրենց գնահատած ուսուցչին նյութապես աջակցելու իրական ու իրավական լծակներ կունենան: Այս նորմատիվ ակտերը օդի պես անհրաժեշտ են, մինչեւ հանրապետության խորհրդարանի կողմից կրթության մասին ՀՀ օրենքի ընդունումը: Լուսավորության նախարարությունը լիարժեք իրավասություններ կունենա հանրակրթության նոր բովանդակության ստեղծման հարցերով զբաղվելու:

Լուսավորության նախարարության Ուսուցիչների կատարելագործման ու ատեստավորման հանրապետական ինստիտուտի, մանկավարժական գիտությունների գիտահետազոտական ինստիտուտի, հանրապետական ուսումնամեթոդական կենտրոնի, քաղաքների ու շրջանների ժողկրթբաժինների մեթոդկաբինետների տարիների զուգահեռ գոյությունը միայն կարմանք է հարուցում: Այստեղ համեստ աշխատավարձով հարյուրավոր հաստիքավոր մանկավարժ գիտաշխատողներից, մեթոդիստներից, մեթոդիստտեսուչներից շատերը, ոչ իրենց մեղքով, պարզապես պարապ են: Այս հաստատությունների ֆունկցիաները մեծապես կրկնում են լուսնախարարության վարչությունները: Ուսումնական-մեթոդական, հետազոտական-մեթոդական եւ ուսումնական գործը ապասարկող ինֆորմացիայի հավաքումն ու մշակումը կկազմակերպենք որակապես նոր օրգանիզմի՝ լուսնախարարության ուսումնագիտական կենտրոնի տեսքով, որը կներառի բազմաֆունկցիոնալ մանկավարժական գրադարանը, ուսումնագիտական խորհուրդները,

մանկավարժական ու մանկան մասին ծառայությունը եւ «Նոր դպրոց» հրատարակչությունը, Մանկավարժության ինստիտուտը, Կրթության հետազոտական ինստիտուտը: Հետազոտական-մանկավարժական աշխատանքների ձեւը կլինի բացառապես պայմանագրային: Սա դպրոցները մեթոդիստ ուսուցիչներով ուժեղացնելու, իսկ կրթական նոր բովանդակության ստեղծմանը պետական կրթական պատվերի շրջանակներում, հանրապետությունով մեկ լավագույն ստեղծագործ ներուժն ընդգրկելու հնարավորություն կտա, անկախ նրանից, թե որտե՞ղ եւ որպես ի՞նչ են աշխատում: Կվերանա տեսուչ-մեթոդիստների անպտուղ բանակը. այդ լավ մասնագետները վերջապես դպրոց կվերադառնան, տեղական իշխանությունը կկենտրոնանա դպրոց եւ ուսուցիչ պահելու պարտավորությունը կատարելու վրա:

Ժամանակն է կշռադատված, բայց համարձակ ու խորը սկսելու հանրակրթության բովանդակության ապարդյունաբերականացումը, դպրոցի կառավարման ապավարչարարությունը եւ ներդպրոցական կյանքի ապառազմականացումը՝ լավագույնս օգտագործելով խորհրդային դպրոցի ուսման գործը կազմակերպելու դասական կառույցներն ու ավանդույթները: Մեր այս անելիքը շարադրել ենք այս փաստաթղթի երկրորդ մասում:

Լավ գիրքը դպրոց արժե: Գրքաստեղծման աշխատանքները կդառնան առավել մրցակցային, թարմ-ընդունակ մասնագետների մեծ ջոկատ պետական կրթական լավ վճարովի պատվերներ կստանա, այլընտրանքային դասագրքերի գործածումը կդառնա նորմա, իրական հիմքեր կստեղծվեն դասագրքերի շուկայի ձեւավորման համար, առանց որի չի կարող լինել բարեփոխվող կրթություն: 1995թ. սեպտեմբերին կունենանք տասնյակ նոր դասագրքեր, որոնք մարդկային մշակույթ, խոհ ու հիացմունք կբերեն դպրոց, կլինեն տնային կրթության օգտակար ձեռնարկներ:

Խոստովանենք՝ մեզանում մանկավարժների պատրաստման բարվոք համակարգ գոյություն չունի, այն, ինչ կա, անբավարար է: Հանրակրթության բարեփոխումները դատապարտված են, եթե բուհական եւ միջնակարգ մասնագիտական կրթությունը, սկսած ընդունելության քննություններից, մոտակայում լուրջ փոփոխություններ չկրի՝ թելադրելով-խթանելով հանրակրթության բարեփոխումների թափն ու ուղղությունը: Լուսավորության նախարարությունն այս հարցում իր կրավորական դերի հետ չի հաշտվի:

Կրթության կարգացման տարածքային կենտրոնների (մանկապարտեզից մինչեւ մանկավարժական ուսումնարան ու ինստիտուտ) ցանցը լուսավորության համակարգում ապակենտրոնացման դեր կատանձնի, փորձարկված ու կենսունակ գաղափարներով կանի հանրակրթության բարեփոխումների, հանրակրթության կարգացմանն անհրաժեշտ դինամիկմ կհաղորդի:

Մեր նեղ վիճակում մենք չենք հանդուրժի այս դրությունը՝ մի կողմում մանկան հատատությունների չօգտագործվող կամ վատ օգտագործվող շենքեր ու նյութական միջոցներ, մյուս կողմում՝ երկհերթ-եռհերթ դպրոցներ, նկուղներում պարապող երեխաներ, կրթական-մշակութային լավ ծրագրի վայել շինությունների պահանջ ունեցող տնօրեններ: Ելնելով թաղամասի երեխաների այսօրվա շահերից ու կրթական-լուսավորչական պահանջներից՝ կվերացնենք մանկան հատատությունները անշահագրգիռ պա-

տերը, մանկան հաստատությունները օրգանապես միավորելով հուսալի տանիքի ներքո՝ թաղամասի կրթության փակ գոտու տեսքով:

Լայն հասարակայնությունից լուսավորության նախարարության մտավորականների ավագանիի ձևավորումը, համակարգում պրոֆեսիոնալ մասնագիտի կենդանացումը, կրթական ամենատարբեր սեմինարների կազմակերպումը, ուսուցչական միությունների գործունեությունը, դպրոցական համայնքների ինքնակառավարման մարմինների աշխույժը կապահովեն հանրակրթության խնդիրներով զբաղվող լրագրողների տեղեկատվություն եւ հասարակության ամենալայն շերտերի օպտիմալ գործակցություն՝ ի շահ դպրոցի:

Լուսավորության հանրակարգի բյուջետային ոլորտի չափերի նկատելի կրճատումը թույլ կտա՝

1. 1995թ. բյուջետային միջոցների կիսակեսում պահել ոչթամյա հանրակրթական դպրոցը,

2. երեխաների մարզամշակութային, գիտատեխնիկական, առողջապահական ամենատարբեր պահանջմունքների բավարարման համար օգտագործել մանկապարտեզների, գիշերօթիկների, մարզադպրոցների եւ արտադպրոցական հաստատությունների շենքերը՝ առաջարկելով բազմաբնույթ վճարովի ծառայություններ, նոր հարաբերությունների շնորհիվ վերածելով դրանք մանկան հաստատությունների, փրկելով շենքերը վերջնական բարոյական ու ֆիզիկական կորստից, մեծ թվով լավ մանկավարժների՝ մասնագիտությամբ լիարժեք զբաղվելու հնարավորություն տալով:

Մասնակի վճարովի, բազմաձայուղ, ուսման տարբերակված տեսությամբ եւ տարախնդիր ավագ դպրոցները կկարողանան ծառայել ավելի ընդարձակ վարչական տարածքների, կդառնան պատանիների մասնագիտական միջավայրի ապահովման ու քաղաքացիության ձեւավորման վայրեր՝ օրիորդաց վարժարաններ, վարժարաններ ու արհեստագործական դպրոցներ: Այս ձեւով լավագույնս կօգտագործվեն մասնագիտական-տեխնիկական ուսումնարանների շենքերն ու նյութական բազան՝ բեռնաթափելով միջնակարգ շատ դպրոցներ:

Ոչ պետական կամ մասնավոր դպրոցների առաջացման համար մենք կարճ միջոցում բարենպաստ պայմաններ կստեղծենք. հաստատությունն ժամանակավոր կանոնադրություն, համապատասխան շինությունների օգտագործման կամ վարձակալման իրավական երաշխիքներ, կանոնադրության համաձայն գործելու պաշտպանվածություն, ապտոնագրման եւ հավատարմագրման ուղիղ ու պարզ մեխանիզմներ, պետական կրթական նորմատիվներով ֆինանսավորվելու հնարավորություն:

Մեկ միասնական հաստատություն կիրականացնի հանրակրթությունը՝ իր բոլոր կառույցներով ու ձեւերով՝ լրատեղն, երեկոյան եւ հեռակա ուսուցում, տնային ուսուցում:

Մենք չենք հաշվի այն փաստի հետ, որ գիշերօթիկ դպրոցները, հատուկ եւ օժանդակ գիշերօթիկ դպրոցները ծառայում են ժամանակավոր ինչ-ինչ շեղումներ ունեցող մեծ թվով երեխաներին հասարակությունից մեկուսացնելու համար: Թույլ տանենք, թույլ լսող, հաշմանդամ, անգամ կույր եւ խուլ

շատ երեխաներ, ունենալով տեխնիկական անհրաժեշտ ապահովում, լիարժեք կկգան իրենց հասակակիցների հետ՝ ստանալով հանրակրթություն նույն դպրոցի մեջ: Այդպիսի համակեցությունը հանդուրժողականության, իր նմանին սիրով ծառայելու հոգեբանության դաստիարակման լավ դպրոց կլինի հապարավոր երեխաների համար:

Հանրապետության տասնյակ մանկան հանգստի ճամբարներ կարող ենք փրկել ավերումից՝ վերածելով ընտանեկան հանգստի կենտրոնների:

Այսօր հանրապետության մանկավարժական ընկերակցությունը մարդկանց մեծաքանակ միավորում է, որը չունի իր պրոֆեսիոնալ դիրքորոշումը եւ, որպես մասնագիտական ընկերակցություն, համապատասխան քաղաքականությունը: Հանրակրթական խնդիրների լուծումը շատ բանով կախված է հենց մանկավարժական ընկերակցությունից: Բարեփոխումները պիտի անցնեն ուսուցչի միջով, փոխեն ուսուցչին: Ուսուցչական ընկերակցությունը կդառնա մեր գործընկերը: Այդ ընկերակցության իդեոլոգիայի ձեւավորումը, նրա իմիջի ստեղծումը, այդ ընկերակցության կենդանացումը առաջնահերթ խնդիր է, որն ավաղ վեր է լուսավորության աշխատողների արիմիութենական կոմիտեների հասկացումից: Կներեք, բայց խեղդվողների փրկության գործը մեծավ մասամբ հենց խեղդվողների գործն է: Մենք ամեն կերպ կնպաստենք մանկավարժական նոր ընկերակցության ձեւավորմանը:

Մեր հասարակությունը խորհրդային տարիներին ձեռք է բերել կրթական բարձր ցենզ՝ դրա ապահովման մեծածավալ բազայով (շենքեր, գույք, սարքավորում, մասնագետներ): Հասարակությունը կարեւորում է միջնակարգ հանրակրթությունը, որը ամենուր ընդունվում է որպես պարտադիր նորմ: Միջնակարգ հանրակրթությունն ամբողջ աշխարհում սերնդի սոցիալական հարմարվողականության ու հասունացման դժվար փոխարինվող դպրոց է: Մենք կհասնենք նրան, որ իշխանությունն ու հասարակությունն իրենց համար շոշափելի դարձնեն միջնակարգ հանրակրթության իրագործման լրջությունը: Վերջերս Ամերիկայի կոնգրեսն ընդունեց «Նպատակներ-2000թիվ» ծրագիրը, որով խնդիր է դրվում, որ մինչեւ 2000 թիվը դպրոցականների 90 տոկոսն ավարտի միջնակարգ դպրոցի լրիվ դասընթացը: Սա՝ Ամերիկայում եւ 2000 թվին: Իսկ մեզանում այսօր, հասարակարգից հասարակարգ անցման բեկվածքում, տարիներով ստեղծած կրթական արժեքավոր կառույցի փլուզման վտանգը հիմնավոր է:

Դպրոցական կոչումն է ցույց տալ լուսավորության բարեփոխումն իրագործելու ճանապարհը այսօրվա պայմաններում, կազմակերպել այդ խնդրի լուծումը՝ օգտագործելով պետական-հասարակական բոլոր լծակներն ու միջոցները:

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

1. Ելակետային դրույթներ

Ա. Մանուկների կրթության պատվիրատուներ են ընտանիքը, համայնքը, հասարակությունը, պետությունը, որոնք, հանրույթի ինքնավերարտադրման եւ համակեցության շահերից ելնելով, ձգտում են հնարավորին չափ կատարյալ կրթության ու դաստիարակության:

Բ. Կատարյալ կրթական արդյունքի հասնելու համար պետք է հենվել մանկան «կրթվելու» բնական պահանջի վրա՝ ոչ թե ուղղակի կրթելով մանկանը, այլ նրա համար կրթվելու պայման ու միջավայր ստեղծելով: Եվ քանի որ կրթությունը երեխայի կյանքի անօտարելի մասն է, ուստի անհրաժեշտ է կրթությունը հարմարեցնել նրա տարիքային աճի բնական փուլերին:

Գ. Թե՛ հանրության, թե՛ գիտության կողմից ընդունված եւ հայրենական մանկավարժության մեջ կիրառված աճի փուլերն են.

1. մինչեւ տասը-տասնմեկ տարեկան (քառամյակ)
2. մինչեւ տասնչորս-տասնհինգ տարեկան (ութնամյակ-իննամյակ)
3. մինչեւ տասնյոթ-տասնութ տարեկան (տասնամյակ-տասնմեկամյակ):

2. Հայեցակարգային դրույթներ

Ա. Առաջին փուլում կրթվելու բնական պահանջն արտահայտվում է մանկան կողմից աշխարհի յուրայնացմամբ, որի արդյունքը լինում է բազմազան աշխարհի նախնական ինքնաբավ ճանաչումը: Երկրորդ փուլում կրթվելու բնական պահանջն արտահայտվում է մանկան կողմից աշխարհի յուրացմամբ, որի արդյունքը լինում է աշխարհի բազմազանության նախնական, ինքնաբավ դասակարգումը: Երրորդ փուլում կրթվելու բնական պահանջն արտահայտվում է մանկան կողմից աշխարհի, տիեզերքի ինքնացմամբ (եսայնացմամբ), որի արդյունքը լինում է աշխարհի բազմազանության նախնական, ինքնաբավ համակարգումը:

Բ. Ուսուցվող առարկաների բովանդակությունը, ուսուցման մեթոդներն ու ծրագրերը պետք է կառուցվեն այնպես, որ դրանք նպաստեն աշխարհի նախնական ճանաչմանը առաջին չորս դասարաններում (տարրական կրթություն), իրականության դասակարգմանը՝ 5-8-րդ դասարաններում (հիմնական կրթություն), տիեզերքի համակարգմանը՝ 9-10/11-րդ դասարաններում (միջնակարգ կրթություն):

Այսպիսով, ամեն մի նոր կրթատարիքային փուլում մատուցվող բոլոր առարկայական գիտելիքների հիմքում ընկած է միեւնույն առանցքային գաղափարը, եւ, եթե պատկերավոր ասենք լինենք, ամեն փուլում աշակերտը ավարտում է մեկ առարկա, հետեւաբար եւ 10-11 տարում՝ երեք առարկա (ճանաչում, դասակարգում, համակարգում), բայց տարբեր արվեստների ու գիտությունների լեզուներով՝ նկարչության, երաժշտության, մաթեմատիկա-

յի, պատմության, ֆիզիկայի, գրականության, քիմիայի, բերականության եւ այլն:

Գ. Կրթատարիքային ամեն մի փուլ ունի ավարտուն ծրագիր, ուստի եւ ըստ այդմ դպրոցը դառնում է եռաստիճան՝ կրտսեր, միջին, ավագ: Կրտսեր եւ միջին դպրոցական կրթությունը (հիմնական կրթություն) պետական-հասարակական պահանջով ու հովանավորությամբ պետք է լինի ընդհանուր պարտադիր, անվճար:

Դ. Ավագ դպրոցը (կամ որ նույնն է՝ վարժարանը, քոլեջը, գիմնազիան, ուսումնարանը եւ այլն) պետք է լինի կամավոր եւ վճարովի, որովհետեւ աշակերտներին տալիս է կոնկրետ մասնագիտացումներ, արհեստներ, հմտություններ, որոնք կյանքում վաստակի աղբյուր կարող են դառնալ՝ կապմելով երիտասարդ քաղաքացիների աշխատանքային գործունեության հիմքը:

Աշխարհի անհատականացված ընկալման ու համակարգման բնույթից կախված՝ ավագ դպրոցը կարող է ունենալ ուսման տարբեր մասնագիտացումներ՝ տարբեր տեսողությամբ: Դրանցից են հասարակագիտական, տեխնիկական, բնագիտական, արհեստագործական, գեղարվեստական, մարզական, օրիորդաց եւ այլն, որոնց շարքում չպետք է անտեսվի նաեւ որեւէ մասնագիտացում չունեցող, այսպես կոչված՝ ընդհանուր ավագ դպրոցը: Կրտսեր եւ միջին դպրոցներում ուսման մեջ այս կամ այն առարկայի ընդգծումը ոչ թե որեւէ մասնագիտացման, այլ ընդամենը թեքման վկայություն է, որովհետեւ պահպանվում է ընդհանուր ծրագիրը: Նման թեքման օրինակներ կարող են լինել կրտսեր եւ միջին դպրոցներում մարզական, գեղարվեստական եւ լեզվական հատուկ պարապմունքները (ըստ նախասիրությունների):

Ե. Վարժարանի ավարտական վկայական ստացած աշակերտը հնարավորություն կստանա ուսումը շարունակելու համապատասխան մասնագիտության բուհում՝ առանց ընդունելության քննության, իսկ ընդհանուր կամ միջնակարգ ավագ դպրոցի շրջանավարտը՝ ընդունելության քննությամբ:

3. Իմաստասիրական դրույթներ

Ա. Կրթատարիքային առաջին փուլում մանկան աշխարհաճանաչման գլխավոր միջոցը լեզվախաղային գործունեությունն է, ուստի ուսուցվող բոլոր առարկաները՝ մայրենի թե օտար, թվերի թե հնչյունների, գույների թե շարժումների լեզուներով, պետք է սկսքնապես մատուցվեն խաղերի միջոցով, «խաղալով», իսկ հետո ուղեկցվեն խաղերով: Խաղային ուսուցման մեթոդը մեկանում թեեւ ընդունվել, բայց անբավարար կիրառություն է գտել:

Բ. Երկրորդ փուլում աշխարհի դասակարգման միասնական միջոց չկա, կան բազմաթիվ կողեր, որոնցից մեկը կամ մի քանիսն այս կամ այն մանկան կողմից ընկալվում եւ շեշտվում են, որպես գլխավոր դասակարգիչ (կլասիֆիկատոր), օրինակ՝ սեռային, ուժային, գունային, հատային եւ այլն: Այս փուլում ուսուցման մեթոդաբանության նպատակն այն է, որ մանուկները, ընկալելով կողերի բազմազանությունը, վերանան նրանցից որեւէ մեկը շեշ-

տելու մղումից եւ կարողանան օգտվել բոլորից, որից հետո նոր առանձնացնեն որոշ կոդեր՝ որպես առավել ինֆորմատիվ (տեղեկատու) կամ առավել ինքնատիպ եւ դատարկ՝ արդեն սակայն խորապես գիտակցելով ու պատճառաբանելով:

Բարդակող դասակարգման հնարավորությունները մեծանում են, երբ մանկան դասակարգման առարկա են դառնում տարբեր աշխարհներ, իրականություններ. ֆիզիկական, քիմիական, լեզվական, մաթեմատիկական, պատմական, գեղարվեստական եւ այլն՝ ըստ իրենց դասագրքերի: Այսպիսով, իրականության հոգեբանական դասակարգումն ու գնահատումն ատիճանաբար վերածվում են իրական-գիտական դասակարգման ու գնահատման: Սա այն արդյունքն է, որով աշակերտ-անհատը կարող է միջին դպրոցով ավարտել ընդհանրապես իր ուսումնառությունը եւ դրանով լուծել որոշակի խնդիրներ գոյատեւման գործնական ոլորտներում: Ահա թե ինչո՛ւ այս փուլի ուսումն անվճար, ընդհանուր ու պարտադիր է:

Գ. Երրորդ փուլում «համակարգումն» սկսվում է այն բանից, երբ աշխարհի դասակարգումը գործնական հարթությունից անցնում է տեսականին, որտեղ աշակերտը պետք է կարողանա աշխարհի բազմազանության մեջ էական տարբերություններ նկատել այնտեղ, որտեղ առաջին հայացքից (երկրորդ փուլի մակարդակում) նույնություն է տիրում, եւ ընդհակառակը, էական նույնականություն դիտել այնտեղ, որտեղ անկեն աչքին տարբերություններ են զարնում: Համակարգման այս եղանակը թելադրվում է կրթատարիքային երրորդ փուլին հատուկ «մասնագիտանալու» մղումից:

Պատահական չէ, որ ավանդական հասարակությունն իր նորահաս անդամին աշխատանքային գործունեության կոչելու առթիվ նվիրագործման ծեսով նրան հատուկ կարգավիճակ էր շնորհում, որով վերջինս հայտնվում էր ընդունված երեք համապարփակ խավերից մեկի կազմում (օրինակ, հոգեւորական կամ ռազմական ծառայության, կամ էլ երկրագործական զբաղմունքի մեջ): Բայց դա միաժամանակ երեք հայացք էր կյանքի ու աշխարհի վրա, երեւույթների մեկնաբանման երեք տեսակետ, որ ձեւավորվում էր մասնագիտական գործունեության սկզբներում: Աննկատելիորեն փնտրելով իր տեղն աշխարհում ու տիեզերակարգում՝ անհատը հայտնաբերում էր մի, այսպես ասած, «մասնագիտական համակարգ», որի կենտրոնում ինքն էր: (Միջնադարից հայտնի են շատ արհեստներ, որոնց առաջացումը սրանց հետեւորդ արհեստավորները կապում էին իրենց արհեստի առասպելական նախահոր կամ այլ հայտնի մշակույթաստեղծ հերոսի (դեմիուրգ) գործունեության հետ): Այսպիսով՝ մասնագիտության փիլիսոփայությունը իր խորքում մի ինքնաբավ պահանջ է նախ եւ առաջ աշխարհը համակարգելու եւ այն մի տեսակ ինքնացնելու: Հաշվի առնելով երրորդ կրթատարիքային փուլի այս առանձնահատկությունը՝ կրթական ծրագրերը պետք է ուղղորդեն, կարգավորեն ավագ դպրոցի աշակերտների «համակարգիչ» ֆունկցիան եւ համապատասխան մասնագիտացումներով հնարավորություն տան նրանց ինքնարտահայտելու: Եվ իրոք, ավագ դպրոցում աշակերտը նաեւ ենթագիտակցորեն իրեն փնտրում է որեւէ մասնագիտացման մեջ, եւ որտեղ իրեն գտնում է, այդտեղ, այդ առարկայի կամ մասնագիտության լեզվով նրան ավելի է հաջողվում համակարգել աշխարհը:

4. Մեթոդաբանական դրույթներ

Ա. Հայտնի է, որ հասարակության կյանքում կրթությունն ավանդական ինքնաբավ կրաղմանը է, եւ նրա բարեփոխումն էլ հիմնված է ավանդույթի առավել արդյունավետ փորձի վրա: Բնական է, որ բարեփոխման ծրագրի շատ դրույթներ, կլինեն դրանք կառուցվածքային թե մեթոդական, ոչ թե նորություն են ներկայացնում, այլ անցյալում երբեւ է կիրառված ու մոռացված դրույթների վերաբերնացումն են նշանավորում: Օրինակ, ելնելով անցյալի կրթական փորձից՝ ճիշտ ենք համարում այն հայացքը, ըստ որի՝ մեր դպրոցում բնական եւ ճշգրիտ գիտությունների ուսուցման բարեփոխումը հիմնական մասով պետք է, տարվի հումանիզացման ուղղությամբ: Իսկ սակայն հասարակագիտական կրթությունը, որն ավելի խոր ու արմատական բարեփոխման է ենթակա, պետք է գլխավին շրջվի դեպի XIX դարի վերջի եւ XX դարի սկզբների հայ դպրոցը, որի հումանիտար թեքման շարունակությունը (գիմնազիայում, ճեմարանում, համալսարանում եւ այլն) հանգում է, ոչ թե առանձին պատմաբանի, գրականագետի կամ քերականի մասնագիտացման, այլ այդ բոլոր հմտությունները իր անձի մեջ ամփոփող մասնագետի՝ հայագետի պատրաստումն (ի դեպ, վերջինիս կրթական մակարդակը թույլ էր տալիս անգամ, ցանկության դեպքում, ձեռնադրվել եւ հոգեւոր կոչման ծառայել): Բարեփոխման նշված երկու ուղղություններով հաջող ընթացքի դեպքում կարող ենք նորովի վերակերտել դարասկզբի հանրագետ (ունիվերսալիստ) հայ մտավորականի հոգեւոր կերպարը եւ դրանով իսկ ավելի բարեկիրթ դարձնել մեր հասարակությունը:

Բ. Հումանիտար կրթությունը բովանդակային բարեփոխման հասցնելու նպատակով հարկավոր է հատկապես վերափոխել նրա առանցքային առարկաների՝ գրականության, քերականության, պատմության եւ օտար լեզուների ուսուցման մեթոդաբանությունը:

1. Գրականության ուսուցման, այսպես կոչված, «ընթերցարանային» մեթոդի անկյունաքար է դիտվում այն հայացքը, ըստ որի՝ հայոց գրականությունը մի լիարժեք ու ինքնաբավ մշակութային երեւույթ է, որը ոչ միայն կարող է բավարարել հայ բազմաճաշակ ընթերցողի պահանջները, այլեւ կարող է տրամադրել հումանիստական, հայրենասիրական ազնվական դաստիարակության համար անհրաժեշտ բոլոր այն տեքստերը, որոնք հարկավոր են կրթատարիքային փուլերով ստիպն ու առանց հոգեբանական բարդույթների անցնելու համար:

Հետեւաբար գրականությունը դառնում է աշակերտի ներքին խոհերը, զրցցմունքները, ուրախությունները կրթող, ազնվացնող միջոց, որն ուղեկցում է նրան ամբողջ կյանքում: Հետո, հասարակագիտական մասնագիտացման, ավագ դպրոցում գրականության աշխարհը կարելի է դասակարգել ու համակարգել թե՛ համաժամանակյա պլանով՝ որպես գրականագիտության ներածություն, թե՛ տարժամանակյա պլանով՝ որպես գրականության պատմություն: Ի դեպ, գրական նյութի սեփական դիտարկումների հիման վրա գեղարվեստական մտածողության ու լեզվի որոշ օրինաչափություններ պետք է վեր հանի ինքն աշակերտը՝ կուգահեռելով այն հարակից առարկա-

ների գծով անցկացվող ձեւաբանական (մորֆոլոգիական) նման մշակումների հետ:

2. Հայտնի է, որ մինչեւ օրս հայոց դպրոցներում հայերենի նորմատիվ քերականության ուսուցումը, նրա պատրաստի կանոնների սերտումը, մի տեսակ ունի ինքնանպատակ, ձանձրալի բնույթ, որը եւ հարուցում է թե՛ ուսուցիչների եւ թե՛ աշակերտների կանգվածային դժգոհություն: Քերականության իմացությունը շատ անհրաժեշտ է ավագ դպրոցում այլ լեզուներ յուրացնելու համար, իսկ կրտսեր եւ միջին դպրոցներում այլ լեզուներ սովորում են ոչ քերականական մեթոդներով: Բայց ահա մայրենի լեզվի քերականության ուսուցման նպատակը շատ ավելի վեհ կլինի, եթե այն օգտագործվի որպես միջոց, այն էլ անփոխարինելի, հատկապես երկրորդ կրթատարիքային փուլում (դասակարգում) աշակերտի տրամաբանական կարողությունը հղկելու, նրան վերլուծական ու նկարագրական հմտություններով օժտելու համար: Այդ միջոցին կարելի է հասնել, եթե աշակերտի ուշադրությունը կենտրոնացվի իր լեզվի, լեզվական իրակությունների՝ որպես մի յուրօրինակ բազմազան աշխարհի վրա: Դասակարգման առարկա դարձնելով այդ աշխարհը՝ աշակերտը այդտեղ կհայտնաբերի օրինաչափություններ, բացառություններ, կսովորի իր լավ ճանաչած լեզվական աշխարհի տվյալների հիման վրա ստեղծագործել, կանոններ ստեղծել եւ արդյունքում «սեփական քերականություն» ստեղծագործել: Քերականության նոր դասագիրքը պետք է լինի ոչ թե մետալեզու, այլ մետաքերականություն, որի հրաշագործ զորությամբ կբացվեն նաեւ աշակերտի երեւակայության անսահման հորիզոններն ու ստեղծագործական անսպառ պաշարները: Դեռ ավելին, տարբեր աշակերտների ստեղծած քերականատեսությունների տարբերակները ուսուցիչներին հնարավորություն կտան ավելի լավ ճանաչելու իրենց փոքրիկ գործընկերների հոգեբանական նկարագրերը: Իսկ հետո, ավագ դպրոցի համակարգման փուլում, կարելի է արդեն մատուցել ակադեմիական-գիտական քերականություն, որը բազմաթիվ ինքնաստեղծ տարբերակների համեմատությամբ կընդունվի որպես ամբողջական, մի տեսակ ինվարիանտ տեսություն (թեկուզ հնարավոր է, որ աշակերտների քերականական դիտարկումներում բացահայտվեն մեր լեզվական աշխարհի նոր իրողություններ, որոնք չեն արձանագրվել մեծերի կողմից):

3. Պատմագիտական կրթության դրվածքի բարելավումը հաշվի է առնում այն հանգամանքը, որ քաղաքական ու տնտեսական արդի պայմաններում «Հայոց պատմությունը» մեր հասարակական համակցության մեջ կարող է ստանձնել յուրօրինակ վերկուսակցական. քաղաքացիական հաշտարար ու խաղաղարար դեր: «Հայոց պատմության» առարկայի ուսուցման նոր մեթոդաբանության հիմքում դրվելու են հետեւյալ բարեփոխիչ դրույթները:

- Կրթատարիքային առաջին փուլում Պատմությունը խառնված է ընդհանուր գեղարվեստական այժմեների հետ եւ հատուկ չի առանձնացվում որպես պատմական գիտելիք: Այս փուլում աշակերտը «պատմականացվում» է իր ընտանեկան, տոհմային, ազգային եւ էթնոմշակութային պատկանելությունը ճշտելով եւ դրանք իր «ինքնագիտակցության» բաղադրիչ դարձնելով: Այս փուլում կարեւորվում են նաեւ տեղական պատմական

այուժենների, ավանդապատումների, ժողովրդական ծիսա-տոնական արարողությունների եւ բանավոր ստեղծագործությունների հետ հաղորդակցումը՝ հատկապես համապատասխան ծիսական խաղերին ու ապգագրական-մշակութային հանդեսներին մասնակցելու միջոցով: Դրանով կսկսվի ապագա դպրոցական վարքագծի ձեւավորման գործում «արարողական» տարրերի ներմուծումը:

- Երկրորդ կրթատարիքային փուլին անցնելու ժամանակ, տասը տարեկանից ի վեր,

«Հայոց պատմությունը» սկզբից մինչեւ վերջ ներկայացվում է որպես ֆիզիկական հաղթանակների պատմություն:

Երկրորդ փուլի երկրորդ կեսում «Հայոց պատմությունը» ներկայացվում է որպես ընդհանրապես հաղթանակների պատմություն՝ ֆիզիկականի հետ հավասարելով նաեւ տնտեսական, շինարարական, կենցաղային, ստեղծագործական եւ լայն առումով մշակութային հաղթանակներ:

- Երկրորդ փուլի վերջում եւ երրորդի սկզբում «Հայոց պատմության» շարադրանքը նախորդ հաղթանակների հետ ներառում է նաեւ պարտություններն ու բացթողումները, դրանով ձգտելով ավելի ամբողջացման ու գիտականացման:

- «Հայոց պատմությունը», սակայն, ավարտվում է երրորդ փուլի վերջում, երբ աշակերտն անցնում է նախորդ դասընթացների ամփոփմանը, որը կարելի է անվանել «Պատմափիլիսոփայություն»: Սա այն դասընթացն է, որը համակարգման պահանջներին համապատասխան ընդհանրացնում է ամբողջ պատմական նյութը՝ հանգեցնելով ներկային, ներկայի պատմական դերին եւ, վերջապես, իր՝ աշակերտ-անհատի պատմամշակութային գիտակցությանը, նրա տեղին ու դերին պատմական հոլովույթի ողջ կոնտեքստում: Պատմության նման անհատականացմամբ կամ որ նույնն է թե ներկայի նման պատմականացմամբ աշակերտը կհասնի գիտական այն հիմնադրույթի ընկալմանը, ըստ որի՝ ոչ միայն պատմական անցյալի ճանաչողությունն է օգնում հասկանալու ներկան, այլեւ ներկայի ճշմարիտ ճանաչողությունն է օգնում հասկանալու պատմական անցյալը:

4. Օտար լեզուների ուսուցման գործում կրթատարիքային տարբեր փուլերում նախատեսվում են հետեւյալ մոտեցումները.

- Առաջին փուլում մայրենի գրաճանաչման դասերին զուգահեռ տարվում են լեզվախաղային գործունեության դասընթացներ, որտեղ օտար լեզուները մայրենիի հետ միասին մատուցվում են խաղերի միջոցով: Ամենասկզբում կարեւոր է հատկապես սեփական խոսակցական լեզվում եղած տարբեր օտար բառերի ճանաչմանն ու առանձնացմանն ուղղված խաղերի կազմակերպումը, որից հետո կարող են հաջորդել նոր բառերի ու արտահայտությունների յուրացման խաղային միջոցները:

- Երկրորդ փուլում սկսվում է օտար լեզվի առանձնացված ուսուցումը ոչ թերականական մեթոդներով, իսկ երրորդում՝ դրան զուգահեռ կիրառվում է նաեւ թերականական մեթոդը:

- Ելնելով տարբեր օտար լեզուների իմացության արդի պահանջներից՝ կարելի է հանրապետության միջին դպրոցների հիման վրա ստեղծել օտար

լեկուների մի քանի ավագ դպրոցներ՝ թարգմանչի մասնագիտացմամբ, այսմանով, որ տվյալ ավագ դպրոցի քառամյա ծրագրով կպատրաստվեն երկլեզու թարգմանիչներ:

5. Գեղարվեստական կրթության բնագավառում հանիրավի անտեսված ու մնացորդային վերաբերմունքի արժանացած առարկայի՝ երաժշտության ուսուցումը առաջին եւ երկրորդ փուլերում դիտվում է որպես մանուկների երաժշտական ունակությունների իրականացման գործունեություն, որի վրա կհենվի երաժշտական ավագ դպրոցը: Սա, իհարկե, չի բացառում մեր կրթական ավանդույթի մեջ արդեն տեղ գրաված հատուկ ավագ դպրոցի գոյությունը՝ կրթատարիքային առաջին փուլից սկսած, թեկուզ հանրակրթականի նման այն եւս կգում է բարեփոխման կարիք: Իսկ բարեփոխումը երաժշտական կրթության մեջ առաջին հերթին պետք է արտահայտվի ուսուցման կոմիտասյան սկզբունքներով, մեծ վարդապետ ուսուցչի դասագրքի հրատարակումով: Սա նշանակում է, որ գոնե առաջին փուլում երաժշտական կրթությունը պետք է միացվի (չառանձնացվի) մայրենիի ընթերցանությանը եւ կազմի մեկ առարկա՝ ասերգություն (ռեչիտացիա), որպեսզի հենց սկզբից մանուկները, հայերեն խոսքի ճիշտ շեշտադրությամբ թելադրված, ընկնեն ազգային միդեդային մտածողության հունի մեջ:

6. Գեղագիտական ու բարոյագիտական դաստիարակության տեսանկյունից մեծ դեր է վերապահվում Մշակութային միջավայրի ճանաչողությանը: Հայաստանի ողջ տարածքը նման մի միջավայր է, որովհետեւ այն ձորից մինչեւ լեռնակատար մշակման հետքեր է կրում, մարդու ձեռքով խնամվել է եւ ծածկվել բազմաթիվ հուշարձաններով: Բարեկրթիչ ազդեցություն կարող է թողնել այն դասագիրքը, որը մեր մանուկներին կհայտնի այդ արժեքների հետ, կսովորեցնի ինչպես վերաբերվել դրանց, ինչպես դրանք ընկալել, պահպանել եւ վերջապես հասկանալ, որ ինքն ապրում է ոչ թե իր հանդում, ձորում, փողոցում, բակում հայտնված երեւույթի, որպես մի օտար, խորթ հուշարձանի կողքին,այլ ապրում է իրենց կյանքը հավերժորեն ուղեկցող մի անշարժ «բնակչի» հետ, կամ մի հարազատ, անցյալից իրեն հասած մշակութային մի «կենցաղի» մեջ, որի տերը, կրողն ու ավանդողն է ինքը: Այս դասագիրքը ինչպես կոչել՝ դժվար է ասել. գուցե «Հայրենի մշակո՛ւյթ», քանի որ կա «Հայրենի բնություն»: Թվում է, ճիշտը երկու դասագրքերի միավորումն է, որով կարելի է վերացնել նաեւ երկրորդի թերությունները, չէ՞ որ բնությունը մարդուց անկախ չէ, եւ միայնակ առարկայի ճիշտ անվանումն է «Հայրենի բնաշխարհ» (Ալիշանի ոճով): Այս առարկայի առանձին, տեղական-գավառային մասերը կարելի է մատուցել առաջին փուլում, որպես աշխարհի նախնական ճանաչում, յուրացում: Իսկ սակայն դրա ընդարձակումը ամբողջ Հայաստանի բնաշխարհիկ միջավայրի վրա կարելի է կրթատարիքային երկրորդ փուլում: Ի դեպ, այս շարունակվող դասագիրքը երկրորդ փուլի ընթացքում կարող է, սկիզբ տալ մի քանի առանձին առարկաների՝ մշակույթի, հայրենի բնության, աշխարհագրության եւ այլն:

Ինչպես արդեն վերը նշվեց, բնական ու ճշգրիտ գիտությունների դասագրքերի հումանիզացնելու հետ միասին, մասնագետներն այդ առարկաների ուսուցման ծրագրերն ու դասագրքերը համապատասխանեցնելու են կրթատարիքային տարբեր փուլերի պահանջներին:

Նույն տեսանկյունից բարդ խնդիրներ են լուծվելու գեղարվեստական դաստիարակության ու կրթության ասպարեզում եւ այլն (օրինակ, հանրակրթական հաստատություններում կերպարվեստի նորովի ներդրման հետաքրքիր տեսակետ է առաջարկվել «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրից):

5. Կազմակերպական դրույթներ

Կրթական բարեփոխումների ողջ գործընթացը ենթադրում է տեսական մշակումների ու ծրագրավորման, գիտական հետազոտությունների ու նախապատրաստման, դասագրքերի փորձարարական կիրարկումների ու հրատարակման, ուսուցիչների վերապատրաստման ու նոր ուսուցչի դպրոցի ստեղծման աշխատանքները:

Աշխատանքների այս ամբողջ փուլը կազմակերպելու համար պետք է ստեղծվի կրթական բարեփոխումների գիտահետազոտական ինստիտուտ-ուսումնագիտական կենտրոն, որի համար հիմնարան կարող են ծառայել մանկավարժական գիտահետազոտական ինստիտուտը, հանրապետական մեթոդական կենտրոնը, Ուսուցիչների կատարելագործման եւ ատեստավորման ինստիտուտը: Միավորումից հետո դրանց կավելացվի եւս մի կարեւոր օղակ՝ մանկավարժական գրադարանը: Տեխնիկական նկատառումներով հարմար է կենտրոնին կցել նաեւ տպարան եւ հրատարակչություն:

Վերջաբանի փոխարեն

Հանրակրթության բովանդակային բարեփոխման սույն ուղենիշների հրապարակումով ՀՀ լուսավորության նախարարությունը կրթական գործի նախանձախնդիր ուժերին կոչ է անում իրենց ջանադիր մասնակցությունը բերել թե՛ սկզբող ուսումնագիտական քննարկումներին, թե՛ դրանց ամփոփման աշխատանքներին եւ թե՛, մանավանդ, բարեփոխումների բոլոր գործնական միջոցառումներին:

Լուսավորության բնագավառում Հայաստանի 1995թ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի եւ 1995թ. պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումներ

1995թ. պետական բյուջեի նախագծում հանրակրթությանը հատկացված է 11,4 մլրդ դրամ, այդ թվում կապիտալ ծախսերի պատրաստմանը (պրոֆեսիոնալ դասընթացներ եւ ուսուցիչների կատարելագործում ու աստիճանավորում)՝ 780,5 մլն դրամ: Սա կազմում է պետբյուջեի ամբողջ ծավալի 8,76 տոկոսը: 1994թ. այդ հարաբերակցությունը եղել է 8,2 տոկոս:

Լուսավորության հատկացումները 1995թ. հանրապետական բյուջեով 1 մլրդ 308 մլն դրամ են, իսկ տեղական բյուջեով՝ 9 մլրդ 248 մլն դրամ:

1994թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ միայն հանրապետական բյուջեով պետական բյուջեի պարտքը լուսավորությանը կազմում էր 28 մլն դրամ:

Գլխավորը հանրակրթության նկատմամբ պետական-հասարակական նոր վերաբերմունքի մշակումն է:

1. Մոտակա տարիներին չի կարելի թույլ տալ պետական բյուջեից լուսավորության բնագավառի ֆինանսավորման ծավալների նվազում 1995թ. համեմատությամբ (տոկոսային հարաբերությամբ), որպեսզի վատթարի տանենք բարեփոխման գործը:

2. 1995թ. լուսավորությանը տրվող բյուջետային հատկացումների ծախսումների մասը պետք է, ամբողջությամբ պահպանել:

3. Լուսավորության բնագավառի շինությունների այսօրվա ծավալը պետք է օգտագործել համակարգի կարիքների համար:

Այսպիսի հարցադրումն օրինական է, քանզի եւ հասարակության, եւ ուսուցչության մեջ անհրաժեշտ է հավատ սերմանել 1995թ. սկսվող հանրակրթության բարեփոխումների նկատմամբ: Սա հնարավոր է, եթե Հայաստանի կառավարությունը լուսավորության նկատմամբ նոր վերաբերմունք դրսեւորի: 1995թ. բյուջեի նախագծի վերաբերյալ երեք առաջարկ ունենք:

1. Հանրապետական բյուջեով լուսանախարարության աշխատանի պահման համար նախատեսված է 15,5 մլն դրամ: Համեմատեք այդ թիվը, օրինակ արդյունաբերության նախարարության պահման ծախսի (26,7 մլն դրամ) հետ: Այսպես լուսանախարարությունը դատապարտվում է մայրաքաղաքի կամ Արարատյան դաշտի նախարարություն լինելու, այն դեպքում, երբ լուսավորության բնագավառի շուրջ 2700 հաստատություններ տեղաբաշխված են հանրապետությունով մեկ: Բարեփոխումների ընթացքի համար լուսանախարարության պատասխանատվությունը հուշում է գոնե երկու անգամ մեծացնել նրա ապարատի պահման տարվա ծախսերը:

2. Նկատի ունենալով 1995թ. հանրակրթության կազմի ու կառուցվածքի փոփոխությունը, դասագրքերի վճարովի լինելը, վճարովի ծառայությունների ցանցի ծավալումը՝ դպրոցների պարտադիր հոգվածով անհրաժեշտ է, լրացուցիչ նախատեսել 400-500 մլն դրամ:

3. Հանրակրթական հաստատություններում ծնվող բազմաթիվ հեռաբրքիր ու

հեռանկարային նախաձեռնություններ մարում են՝ նախարարության կողմից հարկավոր ֆինանսական աջակցություն չստանալով: Հանրակրթության բարեփոխումների իրագործման առաջին տարում սկզբնական օղակների կրթական նորարարությունների ծավալումը վճռական նշանակություն ունի: Այդ նպատակով պետք է լուսնախարարությանը 50 մլն դրամ լրացուցիչ հատկացում կատարել: Բյուջեի նախագծում գումար չի նախատեսվել նաև դասագրքերի մշակման համար: Այստեղ ևս 40-50 մլն դրամի հատկացումը խիստ անհրաժեշտ է:

1995 թ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով նախատեսվում է կատարել լուսավորության բնագավառի կառավարման, մանկավարժական-հեռապտական և ուսումնամեթոդական համակարգերի կառուցվածքային փոփոխություններ:

ՀՀ կառավարության հաստատմանն է ներկայացվել հանրակրթության կառուցվածքային ու բովանդակային բարեփոխման ուղենիշները, պետական հանրակրթական հաստատության, լուսնախարարության և քաղխորհուրդ-շրջխորհրդի գործադիր կոմիտեի ժողկրթբաժնի կանոնադրությունների նախագծերը, լուսնախարարության մանկավարժության հանրապետական ուսումնագիտական համալիրի, նախարարության տնտեսության և տարածքային տեսչական ծառայությունների ստեղծման վերաբերյալ որոշումների նախագծերը: Մշակվել է նախարարության նոր կառուցվածքը: Այս փաստաթղթերի ընդունումը կապահովի հանրակրթության բարեփոխման նոր կարգը:

Լուսնախարարությունն ստեղծել է հատուկ հանձնաժողով, որը հաջողությամբ մշակում է հանրակրթության նոր նորմացույցները:

Կառուցվածքային այս բոլոր բարեփոխումները նպատակ ունեն՝

ա) առավելագույնս ակտիվացնել հանրակրթության բոլոր մասնակիցներին (սովորող, ծնող, ուսուցիչ, իշխանավոր).

բ) հանրակրթության սկզբնական օղակի՝ լուսհաստատության համար ապահովել առաջնթացի բարենպաստ պայմաններ՝ զգալիորեն ընդլայնելով նրա իրավասությունները.

գ) լուսհաստատության նախաձեռնող, եռանդուն ղեկավարների ճանապարհից հեռացնել բոլոր արհեստական արգելքները:

Առանց լուսհաստատությունների ղեկավարների նոր հերթափոխի՝ անհնար է նկատելի թափ հաղորդել հանրակրթության բարեփոխումներին: Պատվախնդիր, գործունյա և ընդունակ մանկավարժ-կազմակերպիչների կորեղ բանակ է հարկավոր: Լուսհաստատությունների այսօրվա ղեկավարների երեքից մեկը թոշակի տարիքի է: Երկուսից մեկը, ունենալով տասից ավելի տարիների աշխատանքային փորձառություն, ղեկավարում է լուսհաստատությունը հինգ և ավելի տարիներ: Խորթ նոր տնտեսակարգին՝ սրանցից շատերը լավագույն դեպքում բարեխիղճ արձանագրողներ են, բարի ժամանակների հիշողություններով ապրողներ: Լուսնախարարությունը սահմանել է լուսհաստատությունների ղեկավարների նշանակման նոր կարգ: Անհրաժեշտ ենք համարում Կրթության զարգացման հիմնադրամի միջոցով լուսհաստատությունների ղեկավարներին զգալի լրավճարների նշանակումը: Շատ ուշադրություն և հիմնական կենտրոնը լուսհաստատությունների ղեկավարների տնտեսագիտական-մանկավարժական կրթության կազմակերպման, նրանց

ղեկավարման կուլտուրայի բարձրացման գործը: Կարևորում ենք նաև մանկավարժների միջև հաղորդակցության վերականգնումը:

Ստեղծել ենք լուսնախարարության «Նոր դպրոց» հրատարակչություն, մանկավարժական և մանկական մամուլի կենտրոն, մանկավարժական գրադարան, սակայն անհրաժեշտ է հրատարակչական և տպագրական ժամանակակից բազա:

Ձևավորվում է մանկավարժության հարցերով զբաղվող պրոֆեսիոնալ լրագրողների ընկերակցությունը, լուսնախարարությունը հեռանկարային աշխատանքներ է սկսել Հեռուստառադիոպետվարչության հետ:

Լուսնախարարության ՄԳԳ ինստիտուտի վերանվանումը Կրթության զարգացման ու կանխատեսման հետազոտական ինստիտուտի՝ սոսկ ցուցանակի փոփոխություն չէ, այլ մոտակա տարիների համար ինստիտուտի գլխավոր թեմայի ճշտում:

Լուսնախարարությունը պետք է լինի ինստիտուտի պատվիրատուն, իսկ ինստիտուտն իր մշակումներով կապահովի հանրակրթության բարեփոխումներին:

Էկոնոմիկայի նախարարության գիտության գումարներից լուսնախարարությանը նկատելի հատկացումներ են անհրաժեշտ՝ առանց ավելորդ քաշքշուկի:

Կառուցվածքային այս բոլոր փոփոխությունները նպատակ ունեն արագացնելու հանրակրթության նոր բովանդակության ստեղծումը, նրա նյութականացումը կրթական նոր ծրագրերի, դասագրքերի ու կրթական տեխնոլոգիաների տեսքով:

1995թ. կշարունակվեն ուսումնական հաստատությունների ատեստավորումը, արտոնագրումը և հավատարմագրումը, ինչպես նաև ոչ պետական ուսումնական հաստատությունների գործունեության կարգավորումը:

Այս նպատակներով լուսնախարարության գլխավոր տեսչությունը լրացուցիչ ֆունկցիաներ կստանձնի, իսկ Ուսուցիչների կատարելագործման ու ատեստավորման ինստիտուտը կգործի նոր կարգավիճակով, որպես Մանկավարժության ինստիտուտ: Մշակվում են և մինչև այս տարվա մայիս ամիսը կգործադրվեն ատեստավորման, արտոնագրման և հավատարմագրման նոր կարգի, ոչ պետական դպրոցների բացման վերաբերյալ փաստաթղթերը, որոնք կապահովեն ոչ պետական դպրոցների ու պետական ավագ դպրոցների համար բարենպաստ պայմաններ, համապատասխան շինությունների օգտագործման ու վարձակալության իրավական երաշխիքներ:

Լուսնախարարությունը մշակում է «Մանկավարժական կադրեր» ծրագիրը: Այսօր ինչպիսի՞ն է լուսհատատությունների ապահովումը մանկավարժներով: Ինչպիսի՞ն այն կլինի մեկ, երկու տարի հետո: Ինչպե՞ս կարելի է կարգավորել մանկավարժական կադրերի պակասն ու հոսքը այսօր, մոտակայում և հեռանկարում: Այս հարցերի պատասխանը կտա այդ ծրագիրը:

Բյուջետային հատկացումների առավելագույն խնայողություն և տնտեսում լուսավորության բնագավառում

1. Բյուջեով պահվող լուսահաստատությունների քանակի ու ծավալների կրճատում.

1.1. Հանրապետությունում այսօր գործում են 38 երեկոյան ու հեռակա դպրոցներ (3126 աշակերտ), որոնց պահպանման համար 1995թ. նախատեսված է 3,3 մլն դրամ:

Հանրակրթական հաստատության տիպային կանոնադրությամբ նախատեսված է հանրակրթության ուսուցման բոլոր ձևերը վերապահել միասնական հանրակրթական դպրոցին:

1995թ. առաջին եռամսյակում վերը նշված բոլոր դպրոցները կլուծարվեն:

1.2. Հանրապետությունում այսօր գործում են 29 օժանդակ գիշերօթիկ դպրոց (3395 սովորող), մեկ հատուկ գիշերօթիկ դպրոց (40 սովորող), հանրակրթական տիպի 18 տարբեր գիշերօթիկ դպրոցներ (5140 սովորող):

Բյուջեով նախատեսվում է հատուկ գիշերօթիկ եւ օժանդակ գիշերօթիկ դպրոցների պահպանման համար 1995թ. ծախսել 1. 327,4 մլն դրամ: Լուսնախարարի հրամանով ստեղծվել է մասնագիտական երկու հանձնաժողով: Առաջինը՝ փոխնախարարի ղեկավարությամբ մեկ ամսվա ընթացքում հատուկ դպրոցների մանրակրկիտ «ինվենտարիզացիա» կանցկացնի, երկրորդը՝ նախարարության գլխավոր հոգեբանի ղեկավարությամբ կմշակի մտավոր եւ ֆիզիկական արատներ ունեցող երեխաների հատուկ մանկավարժության նորովի կազմակերպումը՝ ավելի արդյունավետ, խնայող եւ քաղաքակիրթ:

1995թ. առաջին եռամսյակում կլուծարվեն, կվերակազմավորվեն գործող հատուկ գիշերօթիկ եւ օժանդակ գիշերօթիկ դպրոցների 30 տոկոսը, երկրորդ եռամսյակում՝ եւս 30 տոկոսը: Ազատված ֆինանսական միջոցներն ամբողջությամբ կուղղվեն հատուկ մանկավարժության նորովի կազմակերպմանը, դպրոցական շենքերն ու գույքը լավ բաց կլինեն պետական ու ոչ պետական ինքնուրույն կարգավիճակ ունեցող ավագ դպրոցների ցանցի ընդլայնման համար, իսկ մասնագիտացված գիշերօթիկ դպրոցները (բաժինները) շատ ավելի արդյունավետ կգործեն հանրապետության շրջան-քաղաքներում:

1.3. Հանրապետությունում այսօր գործում են լուսնախարարության ենթակայության 16 եւ տեղական ենթակայության 93 մարզադպրոցներ:

1995թ. առաջին եռամսյակում նույն շրջանի կամ քաղաքի մարզադպրոցները կմիավորվեն: Արդյունքում կունենանք թվով քիչ, բայց ավելի հզոր մարզական կենտրոններ, կբարելավվեն առանձին դպրոցների մարզական պայմանները, պետպատվերով պահվող խմբերի թիվը կկրճատվի 50-տոկոսով:

1.4. Լուսավորության բնագավառում այսօր հաշվվում է 161 արտադպրոցական հաստատություն (նախասիրական կրթական հաստատություն): Այս տարվա առաջին եռամսյակում մի շարք քաղաքների համապատասխան պայմաններ չունեցող տասնյակ հաստատություններ կմիավորվեն, կլուծարվեն մանկապատանեկան հանրապետական կենտրոնի ենթակայության այն հանգրվանները, որոնք սեփական շենքեր ու տարածքներ չունեն: Իր կանոնադրական խնդիրների իրականացմանը կնպաստակաուղղվի հանրապետական կենտրոնի գործունեությունը:

1.5. Հանրապետությունում այսօր գործում է 83 պրոֆտեխուսումնարան (15773 սովորող), որից 3-ը՝ ՆԳՆ բալայի վրա: 1995-96 ուստարում պրոֆտեխուսումնարանները կգործեն նոր կարգավիճակով, որպես միջնակարգ

հանրակրթական ավագ դպրոցի ինքնուրույն տեսակ՝ արհեստագործական ուսումնարան: Պետական վճարումը կլինի միայն ուսպլանի ու կրթական ծրագրի հանրակրթական ծավալի համար: Ստիպված կլինենք գնալ գործող ուսումնարանների լուրջ վերակազմավորման ուղիով, որի արդյունքում ազատված շենքերն ու միջոցները կուղղվեն ավագ դպրոցի ցանցի ընդլայնմանն ու կրթության զարգացման տարածքային կենտրոնների ստեղծմանը:

1.6. 1995թ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով նախատեսվում է կատարել լուսավորության բնագավառի կառավարման, մանկավարժական-հետազոտական եւ ուսումնամեթոդական համակարգերի կառուցվածքային փոփոխություններ:

Լուսնախարարության հանրապետական ուսումնամեթոդական կենտրոնի եւ Կատարելագործման ու ատեստավորման հանրապետական ինստիտուտի պահման համար նախատեսված է 66,9 մլն դրամ: Այս հաստատությունների լուծարումը թույլ կտա ազատված ֆինանսական միջոցները, շինություններն ու գույքը ուղղել հանրակրթության բովանդակության ստեղծմանը՝ այն ապահովելով նոր կառույցներով (մանկավարժական գրադարան, հրատարակչություն, մանկավարժական եւ մանկական մամուլի կենտրոն, մանկավարժության ինստիտուտ):

Հանրապետության քաղաքային-շրջանային ժողկրթբաժիններում այսօր աշխատում են 658 (383+275) մեթոդիստ ու տեսուչ: Լուսնախարարության եւ տեղական իշխանությունների միջեւ իրավասությունների բաժանումն ու հստակեցումը, կառավարման պարզեցումը, լուսնախարարության տարածքային տեսչությունների ստեղծումը թույլ կտա տնտեսելու տեսուչ-մեթոդիստի 380 միավոր հաստիք: Այս միջոցները կուղղենք տեսչական ծառայության զորացմանը եւ մանկավարժական մամուլի կենդանացմանը:

Կառուցվածքային այս բոլոր փոփոխությունները խնդիր ունեն վերականգնելու լուսավորության համակարգում ընդհատված հաղորդակցությունը, որ հնարավոր լինի շրջանառության մեջ դնել նոր մանկավարժության, նոր հասարակության, նոր պետության արժեքները, որ հանրակրթության բարեփոխումներն անցնեն ուսուցչի միջով:

1.7. Հանրապետությունում այսօր գործում է 1085 մասնր-մանկապարտեզ (92100 երեխա): 1994թ. երեխաների օրական փաստացի հաճախման միջին թիվը երկու անգամ ցածր է եղել պլանային թվից: Այնպես որ, մանկապարտեզի երեխաների թվի 50 տոկոսով կրճատումը 1995 թ. պետական պատվերով՝ իրական վիճակի արձանագրումն է: Նախադպրոցական հաստատությունների սպասվող շինությունները, տարածքներն ու գույքը թույլ կտան բեռնաթափելու մի շարք հանրակրթական հաստատություններ՝ կազմակերպելով հարմարավետ ու ինքնուրույն կրտսեր դպրոցներ: Կստեղծվեն պարտեզ-կենտրոններ, պարտեզ-ատելիեներ, որտեղ 3-ից 12 տարեկան երեխաների համար կգործեն մարզամշակութային տարատեսակ նախասիրական խմբեր՝ մասնավի վճարովի ուսուցման սկզբունքով: Առանց նկատելի ծախսերի՝ երեխաների հանրակրթությունը վեց տարեկանից սկսելու համար լավ բազա կունենանք:

Բարենպաստ պայմաններ կստեղծվեն բազմաֆունկցիոնալ, ոչ պետական մանկապարտեզների ծավալման համար: Մանկապարտեզի նոր կանոնադրության գործադրումը թույլ կտա երեխաների սննդի ու

դաստիարակության կազմակերպման գործում գտնել նոր լուծումներ:

1.8. Հանրակրթության աստիճանավորումը, պարտադիր անվճար ութամյա հիմնական կրթության սահմանումը թույլ կտա, 1995թ. սկսած, պետական հոգածության կիսակետում պահել հիմնական դպրոցը: Կունենանք տարատեսակ, մասնակի վճարովի դպրոցների լայն ցանց: Հանրակրթության աստիճանավորման կազմակերպման արդյունավետ ձեւ է տվյալ տարածքի հանրակրթության բարեփոխման բեռը վերցնող կրթական համալիրը: Առանց որեւէ կապիտալ շինարարության, միայն լուսհաստատությունների տարբեր տեսակների ու աստիճանների խելամիտ տեղաբաշխմամբ ու միջոցների ճիշտ օգտագործմամբ՝ ավելորդ կդառնա շատ կիսակառույցների շարունակման, նոր դպրոցական շինություններ ունենալու անհրաժեշտությունը: Միաժամանակ պարզ կդառնա դպրոցաշինության իրական պահանջը: Այսօր այդպիսի պահանջ կարող է լինել միայն աղետի գոտում:

1.9. Օտար լեզուների եւ ինֆորմատիկայի ուսուցման տարածքային (միջդպրոցական) ինքնուրույն կենտրոնների ցանցը թույլ կտա բարձրակարգ մասնագետների մեծ խումբ ներգրավել հանրակրթության ոլորտ, կրթության լրացուցիչ պահանջ ունեցող հիմնական ու ավագ դպրոցների աշակերտների ծնողները կկարողանան առավել մատչելի ու որակով բավարարել իրենց երեխաների կրթական պահանջմունքները: Այդպիսի կենտրոնների պահմանն ու շահագործմանն իրենց մասնակցությունը բերելու մասին արդեն հայտնել են մայրաքաղաքի հայտնի ֆիրմաներ ու կազմակերպություններ:

1.10. Հիմնական դպրոցի ուսպլանը կբեռնաթափվի ու կճշգրտվի: Պարտադիր ուսումնական առարկաները բոլորի համար անվճար կլինեն: Երեխաների նախասիրությունների զարգացման անհանգստությունը, ծնողի ցանկության դեպքում, պարտադրում է միջին դպրոցի նախասիրական առարկաների դասավանդման նորովի կազմակերպում, որպես մասնակի վճարովի ծառայություն:

2. Դպրոցական շենքերի ու շինությունների ընթացիկ ու կապիտալ նորոգման աշխատանքներում մոտակա տարիների համար որպես նախապատվություն կսահմանվի թեք, ալյումինե թիթեղապատ տանիքների ստեղծումը, սանհանգույց-վուգարանների կարգավորումը, շենքերն ու շինություններն առավել էներգասնուցող, ջերմախնայող դարձնելը: Տիպային շենքերի մեծաքանակությունն այստեղ թելադրում է եւ տիպային լուծումների հնարավորություն: Այս խնդրում ակնկալում ենք համապատասխան գերատեսչությունների ուշադիր վերաբերմունքը:

1995 թ. տեղական բյուջեով ՀՀ լուսավորության նախարարության կրթօջախներին հատկացված է 996,1 մլն. դրամ՝ շենքերի վերանորոգման համար:

ՀՀ լուսնախարարությունը նպատակահարմար է գտնում աղետի գոտում, Մասիսի, Էջմիածնի, Հրազդանի շրջաններում եւ Հրազդան քաղաքում այդ նպատակի համար հատկացված գումարները առաջին հերթին օգտագործել այն 57 դպրոցների շենքերի մի մասի վերականգնման համար, որոնք 1988 թ. աղետից հետո չեն շահագործվում, սկսել են քայքայվել եւ լուրջ վտանգ են ներկայացնում այդ շենքերի հարեւանության մեջ տնակներում տեղավորված դպրոցների աշակերտների համար: Սակայն նշենք, որ վերոհիշյալ 57 դպրոցների վերականգնման աշխատանքների համար կպահանջվի մոտ 2 միլիարդ դրամ,

վերանորոգման համար հատկացված է ընդամենը 335,0 մլն. դրամ:

Լուսնախարարությունը նպատակահարմար է գտնում նաև հանրապետության սահմանամերձ շրջաններին հատկացված 145,2 մլն. դրամը առաջին հերթին տրամադրել ռմբակոծությունից տուժած 72 կրթօջախների շենքերի (59 դպրոց, 13 մանկապարտեզ) վերականգնմանը: Այդ կրթօջախների շենքերի վերականգնման ընդհանուր ծախսը կազմում է 2,3 միլիարդ դրամ:

3. Կահմանվեն դպրոցական գործի կազմակերպման նոր նորմացույցներ: Հիմնական դպրոցում մեկ ուսուցչին ընկնող երեխաների այսօրվա թիվը՝ 10,1, բազմաթիվ դպրոցներում օրինակացված դասարաններում երեխաների միջին խտությունը՝ 19,4, չեն համապատասխանում մեր հնարավորություններին: Սա նաև ստեղծում է ուսուցիչների արհեստական պահանջ:

4. Դասագրքերի պակասը պարտադրում է մեկ նորովի կազմակերպելու դպրոցական եւ ոչ դպրոցական՝ մասնայական գրադարանների գործը: Այսօր դպրոցական գրադարանները վերածված են գրասենյակների, իսկ մասնայական գրադարանները փակ են կամ գտնվում անհույս: Մասնայական գրադարանները պիտի գործեն լուսավորության բնագավառում: Յուրաքանչյուր ուսումնական տարածքում կան հենակետ գործող գրադարան՝ իր լուսավոր ու տաք ընթերցարաններով, որտեղ տվյալ ուսումնական տարածքի երեխան կարող է գործող բոլոր տիպի դասագրքերից, ձեռնարկներից ու բառարաններից, իրեն հասանելի թերթերից ու ամսագրերից:

5. Մեկ մտահոգում է լուսավորության համակարգի լուսահատատուությունների շենքերն այլ գերատեսչություններին հանձնելու տխուր իրողությունը:

Միայն 1993-94թ.թ. ՀՀ պաշտպանության նախարարությանն է հանձնվել 12 լուսահատատության շենք, այն դեպքում, երբ այդ հատատություններն այսօր գործում են տարբերական պայմաններից կտրկ շենքերում:

1993թ. «Դպրություն» թերթի խմբագրության կրպակացրած շենքը հանձնվել է «Գթություն» բարեգործական միությանը, մինչդեռ խմբագրությունը, տեղավորվելով «Պարբերական» հրատարակչության շենքում, միայն 1994թ. վճարել է 139,6 հազար դրամ վարձ: 1995թ. հրատարակչությունն արդեն 1քառ. մ-ի համար 6 դոլար է պահանջում:

1992թ. Ուսուցիչների կատարելագործման եւ ատեստավորման հանրապետական ինստիտուտի շենքը հանձնվել է ՀՀ Կառավարության Գործերի կառավարչությանը, որը 1994թ. ընթացքում ինստիտուտից գանձել է 170 հազար դրամ վճար:

Այսպիսի վիճակն անհանդուրժելի է: Անհրաժեշտ է վերադարձնել լուսավորության համակարգի հատատությունների եւ հիմնարկների շենքերը:

Լուսավորության բնագավառի ֆինանսավորման նոր աղբյուրների գործարկում

1. Մենք մշակում ենք ավագ դպրոցում մասնակի վճարովի ուսուցման կազմակերպման սկզբունքները: Մարտ ամսվա ընթացքում հանրակրթության բարեփոխման համար վճռական նշանակություն ունեցող այդ փաստաթուղթ

կներկայացնենք կառավարության քննարկմանը: Ծնողական վճարումները նախ եւ առաջնորդվեն բարձրորակ ուսուցչին պահելուն: Դպրոցական շենքերի պահպանման ու շահագործման ծախսերը գործող նորմատիվներով նախատեսված են 1995թ. նախահաշվով:

2. Փետրվար ամսվա ընթացքում լուսահաստատությունների հոգաբարձուների խորհրդի մասին օրինակելի դրույթի, տարածքային կրթական խորհրդի մասին կանոնադրության եւ կրթասիրաց միության մասին օրինակելի կանոնադրության հաստատումը, պետական հանրակրթական հաստատության տիպային կանոնադրության գործարկումը, խնամքով մշակված սեփական կանոնադրության համաձայն՝ որպես իրավաբանական անձ յուրաքանչյուր լուսահաստատության գրանցումը լուսնախարարության կողմից իրավական ու կազմակերպական հուսալի հիմք կլինի յուրաքանչյուր համայնքի՝ համար իր երեխաների դպրոցով առավել գործուն զբաղվելու:

3. Ոչ պետական դպրոցների, մանկապարտեզների ու նախասիրական կրթական հաստատությունների, տնային դպրոցների, կրթական ամենատարբեր ծառայությունների լայն ցանցի ստեղծում:

4. Լուսավորության հաստատությունների կողմից չօգտագործվող տարածքների, շենքերի ու շինությունների վարձակալումից ստացվող միջոցներ:

5. Արտադրական-ֆինանսական ձեռնարկությունների կողմից հանրակրթական հաստատությունների նյութական աջակցության նոր հարաբերությունների հաստատում: Փետրվար ամսին ՀՀ կառավարության քննարկմանը կներկայացվի այդպիսի փաստաթուղթ:

6. Հանրապետության մի խումբ ճանաչված քաղաքական, տնտեսական եւ մշակույթի գործիչներ նախաձեռնել են Հայաստանի կրթության կարգացման հիմնադրամի ստեղծումը: Հիմնադրամը Կազմավորման փուլում է, եւ հանրապետության կառավարության ուշադիր վերաբերմունքը վճռական նշանակություն կարող է ունենալ հիմնադրամի համար:

7. Լուսահաստատություններում կուտակվել է մեծ քանակությամբ գույք ու սարքավորում, որոնք տարիներ շարունակ չգործածվելով բարոյապես ու ֆիզիկապես մաշվում են: Նախարարության նյութատեխնիկական մատակարարման վարչությունը ստեղծում է խանութների ցանց, որը կզբաղվի այդ գույքի վաճառքով:

8. Դպրոցներում մինչեւ ապրիլի 1-ը կստեղծվեն գրախանութներ, որոնք կզբաղվեն ինչպես գործածված դասագրքերի ու գրքերի առեւտրով, այնպես էլ մանկավարժական-մանկական մամուլի տարածմամբ:

Հանրապետության ներքին հնարավորությունների ավելի մեծ չափով գործադրումը լուսավորության կարիքների համար, բյուջետային հատկացումների առավել խնայող ու լրիվ օգտագործումը հանրակրթության բարեփոխման այս փուլում անբավարար կլինեն: Կպահանջվեն կրթության զարգացմանն ուղղված միջազգային մարդասիրական օգնության ծավալների բազմապատկում, կառավարական ու ոչ կառավարական կազմակերպությունների բազմազան ներդրումներ: Ցավոք, լուսավորության նախարարությունը այսպիսի աշխատանքի ավանդույթներ չունի: Շուտափույթ ստեղծվում են նախարարության նոր կառույցներ: Այս փուլում վճռական կլինի հանրապետության արտաքին գործոն եւ էկոնոմիկայի նախարարությունների կազմակերպական-մասնագիտական աջակցությունը: Անհրաժեշտ է, որ

լուսավորության բնագավառում միջազգային կազմակերպությունների հետ աշխատանքի կոորդինացիայով կբաղվի հենց լուսավորության նախարարությունը, որպեսզի ծրագրերի կազմման առաջին իսկ փուլից այդ օգնությունն ուղղվի հանրակրթության բարեփոխմանը: Այժմ տարբեր կազմակերպությունների հետ մշակվում են հանրակրթության բարեփոխման համար կարեւոր նշանակություն ունեցող մի շարք ծրագրեր: Այդ թվում՝

1. Մանկավարժական ինֆորմացիայի հավաքումը, մշակումն ու սպասարկումը:

2. Սովորողների կոպյուտերային գրագիտության արդյունավետ կազմակերպումը:

3. Կրթության կարգացման տարածքային կենտրոնների ձեւավորումը՝ որպես տվյալ շրջանի, իսկ կրթահամալիրների ձեւավորումը որպես տվյալ թաղամասի կրթական ներուժի կուտակման ու բաշխման կենսական ձեւեր:

4. Հանրակրթության նոր բովանդակությունը կրող դասագրքերի մշակումն ու հրատարակումը:

5. Դպրոցականների օլիմպիական շարժում:

6. Երեխաների ամառային հանգստի կազմակերպումը ընտանեկան ճամբարների ձեւով:

7. Օտար լեզուների եւ ինֆորմատիկայի ուսուցման կենտրոնների կազմակերպում:

8. Լուսավորության համակարգի կառավարման ինֆորմացիոն ապահովումն ու կազմակերպումը:

Աշոտ Բլեյան

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ, ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՏԻՊԵՐԸ, ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԵՐԸ

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ,

ՆԱԽԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ (4 ՏԱՐԻ)
ՏԱՐՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ (4 ՏԱՐԻ)
ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ (8 ՏԱՐԻ)
ՄԻՋՆԱԿԱՐԳ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ (10-11 ՏԱՐԻ):

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՏԻՊԵՐԸ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑ
- ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑ (6-10 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ)
- ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑ (11-15 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ)
- ԱՎԱԳ ԴՊՐՈՑ (16-18 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ)
  - ՎԱՐԺԱՐԱՆ
  - ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
  - ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՊՐՈՑ:

ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(ԵՐԱԺՇՏԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ, ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ԵՎ ԱՅԼ ԴՊՐՈՑՆԵՐ, ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ)

ՀԱՏՈՒԿ ԴՊՐՈՑ (ՄՏԱՎՈՐ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՐԱՏՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԴՊՐՈՑ):

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ (3-6 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ):

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԵՐԸ

- ՑԵՐԵԿԱՅԻՆ
- ԵՐԵԿՈՅԱՆ (ԱՌԿԱ)
- ՀԵՌԱԿԱ
- ԷՔՍՏԵՌՆ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՈՒՄԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հանրակրթության բարեփոխման ուղենիշներ 3
Առաջին մաս 3
Երկրորդ մաս 11
Լուսավորության բնագավառում Հայաստանի 1995թ. սոցիալ - տնտեսական զարգացման ծրագրի և 1995թ. պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումներ 19
Տեղեկատու
ա) Հանրակրթության աստիճանները, հանրակրթական հաստատության տիպերը, ուսուցման ձևերը 28
բ) ՀՀ լուսավորության համակարգը 29